Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
մարտի 26-ի նիստի N 13
արձանագրային որոշման

ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

հ/հ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակատա-րողը	Ժամկետը	Ֆինանսա-կան ապահովումը	Հղումը
1	2	3	4	5	6	7	8
1.	Կանանց և տղամարդկանց իրավահավասարության մշտադիտարկ-ման և գնահատման, գործընկերային հարաբերությունների բարելավման մեխանիզմների ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում:	Կանանց և տղամարդկանց իրավահավասարու-թյան մշտադիտարկման և գնահատման, գործընկերային հարաբերությունների բարելավում:					ՀՀ կառավա-ության 2011թ մայիսի 20-ի նիստի N19 արձանա գրային որոշման 3-րդ և 4-րդ կետեր
	1.1 Իրականացնել ուսումնասիրություն և ՀՀ կառավարություն ներկայացնել զեկույց Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների առկա իրավիճակի վերաբերյալ:		ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀԿ-ներ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	1.2 Մշակել և ՀՀ մարզպետարաններին տրամադրել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների իրավիճակային գնահատման մեթոդաբանություն:		ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		Դեկտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում	

	1.3 Ուսումնասիրել կանանց և տղամարդկանց իրավահավասարության իրավիճակի շարժընթացի գնահատման և մշտադիտարկմանն ուղղված միջազգային փորձը, մշակել ՀՀ մարզերում կանանց և տղամարդկանց իրավահավասարության առկա իրավիճակի պարբերական գնահատման, մշտադիտարկման ցուցանիշներ և դրա ներդրման վերաբերյալ առաջարկություններ:		ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	ՀԿ-ներ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	
2.	Կանանց և տղամարդկանց առողջության բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացում:	Կանանց և տղամարդկանց առողջության բարելավում:					
	2.1 Իրականացնել բնակչության շրջանում ոչ վարակիչ հիվանդությունների (կաթնագեղձերի, սեռական օրգանների, արգանդի պարանոցի քաղցկեղ) վաղ հայտնաբերման և կանխարգելման սկրինինգային ծրագրեր՝ մեծացնելով հիվանդությունների վաղ փուլերում հայտնաբերման դեպքերի ցուցանիշը 30-40 տոկոսով:		ՀՀ առողջապահության նախարարություն		Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե, Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	2.2 Հայաստանի Հանրապետության 6 մարզերի առողջապահական կենտրոններում «Բրեստ լայթ» սարքի միջոցով իրականացնել կաթնագեղձերի քաղցկեղի սկրինինգ:		ՀՀ առողջապահության նախարարություն		Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե, Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	2.3 Կազմակերպել «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի քննարկումներ՝ ՀՀ կառավարություն ներակայացնելու նպատակով:		ՀՀ առողջապահության նախարարություն	ՀԿ-ներ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	2.4 Մշակել և իրականացնել առողջ ապրելակերպի, ծխելու դեմ պայքարի և		ՀՀ առողջապահության	ՀԿ-ներ /համաձայնութ	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե, Օրենքով	

	անվտանգ սեռական կյանքի վերաբերյալ, ինչպես նաև սեռով պայմանավորված աբորտների կանխարգելմանն ուղղված քարոզչական և հանրային տեղեկատվական-իրազեկման միջոցառումներ /կազմել և տարածել պոստերներ, բուկլետներ, կազմակերպել հեռուստատեսային հաղորդումներ/՝ ներգրավելով հասարակական կազմակերպություններ և ԶԼՄ-եր:		նախարարություն	յամբ/		չարգելված ֆինանսա-վորման աղբյուրներ	
	2.5 Կազմակերպել սեմինարներ, կլոր-սեղան քննարկումներ, մարզային խորհրդաժողովներ, տեղեկատվական-իրազեկման աշխատանքներ առողջապահության ոլորտի մասնագետների մասնակցությամբ՝ առողջ ապրելակերպի (ծխելու դեմ պայքարի, անվտանգ սեռական կյանքի և այլն) վերաբերյալ:	Առողջ ապրելակերպի վերաբերյալ իրազեկության բարձրացում:	ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	ՀԿ-ներ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսա-վորման աղբյուրներ	
3.	Կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը, աղքատության հաղթահարմանը, գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում կանանց մասնակցության հնարավորությունների ընդլայնմանը և շուկայական հարաբերություններում մրցակցային միջավայրի ձևավորմանն ուղղված միջոցառումների իրականացում:	Կանանց սոցիալ-տնտեսական հնարավորությունների ընդլայնում:					
	3.1 «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» նոր ծրագրի շրջանակներում իրականացնել. ա/ Հայաստանի Հանրապետության 8 մարզերում, հատկապես բարձրադիր տարածքներում գտնվող թիրախային 100 համայնքներում աջակցության հատուկ միջոցառումներ՝ ուղղված կանանց մասնակցությամբ գործող կոոպերատիվ-		ՀՀ գյուղատնտեսության նախարարություն		Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսա-վորման աղբյուրներ	

	ների ձևավորմանը և կարողությունների հզորացմանը, կազմակերպել հատուկ ուսուցում՝ նպատակ ունենալով բարձրացնել նրանց ընդգրկվածությունը գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության և կառավարման հետ կապված որոշումների կայացման գործընթացում, բ/ արժեքային շղթայի զարգացման աջակցության բաղադրիչով մրցակցային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում գյուղական բնակավայրերում գործող կանանց համար ստեղծել հնարավորություն ներգրավվելու ագրարային ոլորտի արտադրական կարողություններում,						
	3.2 Իրականացնել գյուղատնտեսության ոլորտում տրամադրված վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորում. տրամադրել վարկեր գյուղատնտեսությունում տնտեսվարողներին ագրարային արտադրության և սպասարկման տարբեր բնագավառներում:		ՀՀ գյուղատնտեսության նախարարություն		Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	3.3 Իրականացնել «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագիրը. ՀՀ մարզերում և Երևան քաղաքում կազմակերպել դասընթացներ՝ 250-300 կին գործարարների մասնակցությամբ:		ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Հայաստանի փոքր և միջին ձեռներեցության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	3.4 Իրականացնել «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն», «Գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» և «Գործարար ուսուցողական /տեղեկատվական/ աջակցություն» ծրագրերը, սկսնակ կին գործարարներին տրամադրել ուսուցողական, տեղեկատվական,		ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Հայաստանի փոքր և միջին ձեռներեցության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ /համաձայնութ	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	

	խորհրդատվական, ինչպես նաև ֆինանսական աջակցություն:			յամբ/			
4.	Կրթության և գիտության պետական քաղաքականության մեջ կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ գիտելիքների հաղորդմանն ուղղված միջոցառումների իրականացում:	Կանանց և տղամարդկանց իրավահավասարու-թյան վերաբերյալ իրազեկության բարձրացում:					
	4.1 Հանրակրթական դպրոցի 8-12-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման ընթացքում սովորողներին ուսուցանել կանանց և տղամարդկանց իրավահա վասարության վերաբերյալ գիտելիքներ:		ՀՀ կրթության և գիտության նախարարություն		Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	
	4.2 Հանրակրթական դպրոցներում կիրառել «Դաստիարակչական աշխա-տանքը դպրոցում. մասնագիտական կողմնորոշման խնդիրներ» օժանդակ ձեռնարկը: Դասղեկական ժամերի ընթացքում սովորողները իրազեկվել մասնագիտական կողմնորոշման հարցերի շուրջ՝ ուղղված սեռի հատկանիշով կարծրատիպերի հաղթահարմանը, աղջիկների և տղաների շրջանում իրենց սեռի համար ոչ ավանդական մասնագիտությունների նկատմամբ մոտիվացիայի ձևավորմանը:		ՀՀ կրթության և գիտության նախարարություն		Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	
	4.3 Հանրակրթական դպրոցի ուսուցիչների նախաատեստացիոն վերապատրաստման դասընթացներում ներառել կանանց և տղամարդկանց իրավահավասարությանը վերաբերող թեմաներ:		ՀՀ կրթության և գիտության նախարարություն		Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	
	4.4 Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների, փոխտնօրենների և մանկավարժների		ՀՀ կրթության և գիտության նախարարություն		Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	

	վերապատրաստման դասընթացներում ներառել կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականությանն առնչվող թեմաներ:						
	4.5 Իրականացնել «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնահարցեր» թեմայով քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացներ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2008թ. հուլիսի 8-ի N567-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակում:		ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	
	4.6 ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչության և անչափահասների գործերով տարածքային բաժինների ծառայողների համար իրականացնել վերապատրաստման դասընթացներ կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության վերաբերյալ:		ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն		Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	4.7 Կազմակերպվել կանանց և տղամարդկանց իրավահավասարության թեմաներով դասընթացներ, սեմինարպարապմունքներ, «Լիդերության դպրոց» ծրագրով դասընթացներ, կլորսեղան քննարկումներ տարբեր ոլորտների մասնագետների մասնակցությամբ:		ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	ՀԿ-ներ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
5.	Մարզային և համայնքային մակարդակներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետության բարձրացմանը, այդ աշխատանքների համակարգմանն ու մշտադիրակմանն ուղղված միջոցառումների իրականացում:	Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետության բարձրացում:					

	5.1 ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով զբաղվող հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման նպատակով հրավիրվել նիստեր, ամփոփել կատարված աշխատանքները, կազմել հաշվետվություններ և արձանագրություններ:		ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/		Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	
	5.2 Իրականացնել մարզում կանանց և տղամարդկանց իրավահավասարության առկա վիճակի գնահատման և մշտադիրակման ապահովմանն ուղղված լուսաբանման աշխատանքներ:		ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/		Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	
6.	Հասարակությունում կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնահարցերի լուսաբանմանը, սեռի հատկանիշով խտրական գործելակերպի հաղթահարմանը և զանգվածային լրատվամիջոցներով դրանց տարածմանն ուղղված միջոցառումների իրականացում:	Հասարակությունում սեռով պայմանավորված խտրականության երևույթի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորում: Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետության բարձրացում մշակույթի և					
	6.1 Մշակել և մարզի ԶԼՄ-ներով լուսաբանել /տեղադրել հոդվածներ, կազմակերպել հեռուստատեսային հաղորդումներ/ կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդիրների վերաբերյալ:		ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետա-րան /համաձայնու-թյամբ/	ՀԿ-ներ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսա-վորման աղբյուրներ	
	6.2 ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնական կայքում և «Արտակարգ թերթում» տեղադրել արտակարգ իրավիճակներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ տեղեկատվական նյութեր: Աշխատանքներ տանել արտակարգ իրավիճակների կառավարման վերաբերյալ միջոցառումներում տղամարդկանց և կանանց հավասար մասնակցությունն ու պլանավորման մեջ		ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն		Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	

	նրանց ընդգրկվածությունն ապահովելու ուղղությամբ:	հանրային տեղեկատվության ոլորտներում:					
	6.3 Իրականցնել «Կին» միջազգային կինոփառատոն՝ 50-ից ավելի կին ռեժիսորների ֆիլմերի ցուցադրությամբ:		ՀՀ մշակույթի նախարարություն	«Լիզա» հմնադրամ /համաձայնությամբ/	Նոյեմբեր-դեկտեմբեր	ՀՀ պետական բյուջե, Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	6.4 Երևան քաղաքում կազմակերպել 2014-2015թթ. հայտարարված Ընտանիքի տարվան նվիրված սեմինար՝ «Հայ ընտանիքն այսօր» թեմայով:		Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/		Մայիս	Երևան քաղաքի բյուջե	
	6.5 Երևան քաղաքում կազմակերպել «Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունն իմ պատկերացմամբ» նկարների ցուցահանդես:		Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	Հանրակրթական հաստատություններ /համաձայնությամբ/	Երրորդ եռամսյակ	Երևան քաղաքի բյուջե	